Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 19th February 2023 Bulletin 9/2023

Poon Paregentan (Eve of Great Lent)

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 13:11 -14:23

Սիրոյ այս սկզբունքով ընթացէք, գիտնալով թէ ի՛նչ ժամանակի մէջ կ'ապրինք: Ժամանակն է որ քունը թօթափենք եւ արթննանք, որովհետեւ հիմա փրկութիւնը աւելի մօտ է մեզի, քան այն ատեն՝ երբ հաւատացինք: Գիշերը ահա կ'անցնի եւ ցերեկը մօտ է: Ուստի խաւարի գործերէն հեռանանք եւ լոյսի զէնքերը մեր վրայ առնենք, ապրելու համար այնպէս՝ ինչպէս վայել է լոյսի մէջ քայլողներուն, փոխանակ անառակութեամբ, արբեցութեամբ, խառնակեցութեամբ ու պղծութեամբ, կամնախանձով ու հակառակութեամբ ապրելու: Տէր Յիսուս Քրիստոսի նկարագիրը ձեր վրայ առէք, եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք:

Եղբայրդմի՛ դատեր

Հաւատքի մէջ տկարացած մէկը ընդունեցէք՝ առանց իր խիղճը տանջող կասկածները քննադատելու: Օրինակ, մէկը կը հաւատայ՝ թէ ամէն ինչ կարելի է ուտել: Ուրիշ մը, որ կասկած ունի այդ մասին, բանջարեղէն կ'ուտէ միայն: Ամէն ինչ ուտողը թող չարհամարհէ չուտողը, իսկ չուտողը թող չքննադատէ ուտողը, որովհետեւ Աստուած զայն ընդուներ է: Ո՞վ ես դուն, որ Աստուծոյ ծառան կը դատես: Տէրը ի՛նք միայն գիտէ՝ իր հաւատքին մէջ կանգո՞ւն է անիկա, թէ ինկած: Բայց վստահ եղէք որ կանգուն պիտի մնայ, որովհետեւ Տէրը կրնայ զայն կանգուն պահել:

Նոյնպէս, ոմանք կը խորհին՝ թէ զԱստուած պաշտելու համար այսինչ օրը աւելի կարեւոր է քան միւս օրը, մինչ ուրիշներու համար բոլոր օրերը նոյնն են: Իւրաքանչիւրը թող իր համոզումը պահէ: Կը բաւէ որ թէ՛ յատուկ օր մը փնտռողը եւ թէ՛ օրերու միջեւ խտրութիւն չդնողը երկուքն ալ Տէրը պատուել կը խորհին: Նոյնպէս ալ, թէ՛ ամէն ինչ ուտողը Տէրը կը պատուէ եւ թէ՛ չուտողը, երբ երկուքն ալ Աստուծոյ գոհութիւն կը յայտնեն:

Մեզմէ ոեւէ մէկը ինքն իր անձին համար չ'ապրիր, ո՛չ ալ ինքն իրեն համար կը մեռնի: Եթէ կ'ապրինք՝ Տիրոջ համար կ'ապրինք, եւ եթէ կը մեռնինք՝ Տիրոջ համար կը մեռնինք, որ կը նշանակէ թէ՝ ըլլա՛յ կեանքի եւ ըլլա՛յ մահուան մէջ՝ Տիրոջ կը պատկանինք: Ատոր համար ալ Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի Տէրը ըլլայ բոլորին, թէ՛ ապրողներուն եւ թէ՛ մեռածներուն հաւասարապէս: Ինչո՞ւ կը դատես ուրեմն եղբայրդ, կամ ինչո՞ւ զայն կ'արհամարհես: Բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է.–

«Ես ինձմով կ'երդնում,– կ'ըսէ Տէրը,–
որ ամէն ծունկ պիտի խոնարհի առջեւս եւ ամէն լեզու պիտի խոստովանի թէ ես եմ Աստուածը»:

Եղբայրդ չգայթակղեցնես

Քանի ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը իր անձին համար հաշիւ պիտի տայ

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Աստուծոյ, այսուհետեւ դադրի՛նք իրար քննադատելէ, եւ փոխարէնը ջանանք մեր եղբայրներուն գայթակղութեան եւ մեղանչումին պատճառ չդառնալ:

Յիսուս Քրիստոսով հետեւեալը ապահովապէս գիտեմ, թէ ինքնին պիղծ բան չկայ: Բան մը պիղծ կ'ըլլայ ա՛յն մարդուն համար, որ զայն պիղծ կը համարէ: Եթէ գիտես թէ քու ուտելովդ եղբօրդ խղճմտանքը կը վիրաւորես, սիրով շարժած չես ըլլար՝ երբ ուտես: Քու կերակուրովդ պատճառ մի՛ դառնար որ կորսուի եղբայրդ, որուն համար Քրիստոս իր կեանքը տուաւ: Առիթ մի՛ տար որ բարի եւ ուղիղ սեպած բանդ հայհոյութեան պատճառ դառնայ: Որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը կերակուր կամ ըմպելիք չէ, այլ՝ արդարութիւն, խաղաղութիւն եւ խնդութիւն, Սուրբ Հոգիէն տրուած: Եւ ով որ ասոնցմով կը ծառայէ Քրիստոսի, անիկա Աստուծոյ հաճելի եւ մարդոց գովելի կ'ըլլայ:

Արդ, այսուհետեւ խաղաղութիւն փնտռենք եւ աշխատինք իրարու հաւատքը ամրապնդել: Չըլլա՛յ որ կերակուրի պատճառով Աստուծոյ գործը քանդես: Ամէն բան ինքնին մաքուր է. բայց սխալ է բան մը ուտել, երբ ատիկա ուրիշ մը կը գայթակղեցնէ: Աւելի ճիշդ է՝ ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ ուրիշ ոեւէ բան ընել՝ որով եղբայրդ կը գլորի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ: Այս մասին քու համոզումդ՝ քու եւ Աստուծոյ միջեւ թող մնայ: Երանի՛ անոր որ ինքզինքը դատապարտութեան չ'ենթարկեր այնպիսի բաներով՝ որով իր ընկերոջ փորձութեան պատճառ կ'ըլլայ: Միւս կողմէ, եթէ մէկը կասկած ունի իր կերածին անմաքրութեան մասին, Աստուծոյ դատապարտութեան ենթակայ է՝ եթէ ուտէ, որովհետեւ իր արարքը հաւատքի արդիւնք չէ: Եւ ինչ որ հաւատքէն չի գար՝ մեղք է:

The Epistle of St Paul to the ROMANS 13:11-14:23;

The day is near

As you do all this, you know what time it is. The hour has already come for you to wake up from your sleep. Now our salvation is nearer than when we first had faith. The night is almost over, and the day is near. So let's get rid of the actions that belong to the darkness and put on the weapons of light. Let's behave appropriately as people who live in the day, not in partying and getting drunk, not in sleeping around and obscene behaviour, not in fighting and obsession. Instead, dress yourself with the Lord Jesus Christ, and don't plan to indulge your selfish desires.

Welcoming each other like Christ

Welcome the person who is weak in faith—but not in order to argue about differences of opinion. One person believes in eating everything, while the weak person eats only vegetables. Those who eat must not look down on the ones who don't, and the ones who don't eat must not judge the ones who do, because God has accepted them. Who are you to judge someone else's servants? They stand or fall before their own Lord (and they will stand, because the Lord has the power to make them stand). One person considers some days to be more sacred than others, while another person considers all days to be the same. Each person must have their own convictions. Someone who thinks that a day is sacred, thinks that way for the Lord. Those who eat, eat for the Lord, because they thank God. And those who don't eat, don't eat for the Lord, and they thank the Lord too. We don't live for ourselves and we don't die for ourselves. If we live, we live for the Lord, and if we die, we die for the Lord. Therefore, whether we live or die, we belong to God. This is why Christ died and lived: so that he might be Lord of both the dead and the living. But why do you judge your brother or sister? Or why do you look down on your brother or sister? We all will stand in front of the judgment seat of God. Because it is written,

"*As I live, says the Lord, every knee will bow to me,* "
"*and every tongue will give praise to God.*"

So then, each of us will give an account of ourselves to God.

So stop judging each other. Instead, this is what you should decide: never put a stumbling block or obstacle in the way of your brother or sister. I know and I'm convinced in the Lord Jesus that nothing is wrong to eat in itself. But if someone thinks something is wrong to eat, it becomes wrong for that person. If your brother or sister is upset by your food, you are no longer walking in love. Don't let your food destroy someone for whom Christ died. And don't let something you consider to be good be criticized as wrong. God's kingdom isn't about eating food and drinking but about righteousness, peace, and joy in the Holy Spirit. Whoever serves Christ this way pleases God and gets human approval.

Prayer in Secret

So let's strive for the things that bring peace and the things that build each other up. Don't destroy what God has done because of food. All food is acceptable, but it's a bad thing if it trips someone else. It's a good thing not to eat meat or drink wine or to do anything that trips your brother or sister. Keep the belief that you have to yourself—it's between you and God. People are blessed who don't convict themselves by the things they approve. But those who have doubts are convicted if they go ahead and eat, because they aren't acting on the basis of faith. Everything that isn't based on faith is sin.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 6:1-21

Ուսուցում ողորմութեան մասին

Զգո՛յշ, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

Երբ ողորմութիւն կ'ուզես տալ, փող ու թմբուկով մի՛ ըներ՝ մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ փառաւորուելու ակնկալութեամբ: Վստա՛հ եղէք, միայն ատիկա է անոնց վարձա տրութիւնը: Ընդհակառակը, երբ դուն ողորմութիւն կու տաս, ձախ ձեռքդ թող չգիտնա՛յ թէ ինչ կ'ընէ աջ ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ'ըլլաս, եւ քու երկնաւոր Հայրդ, որ անտեսանելի է եւ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Ուսուցում աղօթքի մասին *(Ղկ 11.2-4)*

Christ Teaching How to Pray

Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնները կեցած աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը: Դուն երբ կ'աղօթես՝ մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ ծածուկ կերպով աղօթէ քու երկնաւոր Հօրդ: Եւ Հայրդ որ անտեսանելի է ու կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս:

Տակաւին, երբ կ'աղօթէք, մի՛ շատախօսէք հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ շատ խնդրեն՝ լսելի պիտի դառնան: Արդ, մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք: Ուրեմն այսպէս աղօթեցէք.–

Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ.
թող գայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ:
Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր:
Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են:
Եւ թոյլ մի՛ տար Իսոր փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ՛:
Որովհետեւ քուկդ են միշտ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն:

Որովհետեւ եթէ մարդոց ներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները:

Ուսուցում ծոմապահութեան մասին

Երբ ծոմ կը պահէք, տրտումերես մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծոմ կը պահեն: Վստահ եղէք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը:

Ընդհակառակը, երբ դուն ծոմ կը պահես, օծէ՛ գլուխդ եւ լուա՛ երեսդ, որպէսզի մարդիկ չտեսնեն թէ ծոմ կը պահես, այլ՝ միայն Հայրը, որ անտեսանելի է. եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Գանձ երկինքի մէջ *(Ղկ 12.33-34)*

Ձեր հարստութիւնը մի՛ դիզէք երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը կը փճացնեն եւ կամ գողերը պատդ քանդելով ներս կը մտնեն ու կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը դիզեցէք երկինքի մէջ, ուր ցեցն ու ժանգը չեն կրնար փճացնել զայն, եւ ոչ ալ գողերը կրնան պատդ քանդելով ներս մտնել եւ գողնալ: Որովհետեւ ձեր հարստութիւնը ո՛ւր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 6:1-21

Showy religion

"Be careful that you don't practice your religion in front of people to draw their attention. If you do, you will have no reward from your Father who is in heaven.

"Whenever you give to the poor, don't blow your trumpet as the hypocrites do in the synagogues and in the streets so that they may get praise from people. I assure you, that's the only reward they'll get. But when you give to the poor, don't let your left hand know what your right hand is doing so that you may give to the poor in secret. Your Father who sees what you do in secret will reward you.

Showy prayer

"When you pray, don't be like hypocrites. They love to pray standing in the synagogues and on the street corners so that people will see them. I assure you, that's the only reward they'll get. But when you pray, go to your room, shut the door, and pray to your Father who is present in that secret place. Your Father who sees what you do in secret will reward you.

Proper prayer

"When you pray, don't pour out a flood of empty words, as the Gentiles do. They think that by saying many words they'll be heard. Don't be like them, because your Father knows what you need before you ask. Pray like this:

Our Father who is in heaven, uphold the holiness of your name.
Bring in your kingdom so that your will is done on earth as it's done in heaven.
Give us the bread we need for today.
Forgive us for the ways we have wronged you, just as we also forgive those who have wronged us.
And don't lead us into temptation, but rescue us from the evil one.

"If you forgive others their sins, your heavenly Father will also forgive you. But if you don't forgive others, neither will your Father forgive your sins.

Showy fasting

"And when you fast, don't put on a sad face like the hypocrites. They distort their faces so people will know they are fasting. I assure you that they have their reward. When you fast, brush your hair and wash your face. Then you won't look like you are fasting to people, but only to your Father who is present in that secret place. Your Father who sees in secret will reward you.

Earthly and heavenly treasures

"Stop collecting treasures for your own benefit on earth, where moth and rust eat them and where thieves break in and steal them. Instead, collect treasures for yourselves in heaven, where moth and rust don't eat them and where thieves don't break in and steal them. Where your treasure is, there your heart will be also.

Կ.ՊՈԼՍԻ ՏԻԵԶԵՐԱԺՈՂՈՎԻ 150 ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ (381Թ.) ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Ընդհանրական Եկեղեցու առջև պատմության տարբեր ժամանակահատվածներում ծառացել են դավանաբանական, վարդապետական, վարչակազմակերպչական խնդիրներ, որոնց պատասխանները տրվել են սրբազումար տիեզերական ժողովների ընթացքում: Այդպիսի ժողովներից էր նաև 381 թվականին Թեոդոսիոս կայսեր հրամանով գումարված Կ.Պոլսի Բ տիեզերաժողովը:

Արիոսական վեճերի արդյունքում հայտնվել էր մի նոր հերետիկոսություն՝ գլուխ և պաշտպան ունենալով Կ.Պոլսի Մակեդոն արքեպիսկոպոսին, ով մերժում էր Սուրբ Հոգու աստվածությունը: Սույն խնդրով գումարված վերոհիշյալ տիեզերաժողովը վերահաստատում է Նիկիայի ժողովում ընդունված դավանությունը և ապա պաշտպանում Սուրբ Հոգու աստվածության վարդապետությունը՝ որդեգրելով «մի Աստվածություն, երեք անձինք» բանաձևը: Ընդունելով սույն տիեզերաժողովը՝ Հայ Եկեղեցին նշում է ժողովին մասնակից 150 սուրբ հայրապետների հիշատակության օրը:

COMMEMORATION OF 150 PONTIFFS PARTICIPATING IN THE ECUMENICAL COUNCIL OF CONSTANTINOPLE

During different periods of history the Ecumenical Church has faced various problems of doctrinal, administrative and organizational nature, solutions to which have been provided during the Ecumenical Councils. One of such councils was the Second Ecumenical Council convened upon the order of the King Theodosios in Constantinople, in 381.

As the result of Arian disputes a new heresy had appeared, the head and supporter of which was Bishop Makedon of Constantinople, who denied the deity of the Holy Spirit. The Ecumenical Council convened in Constantinople on that special occasion, re-endorsed the definition of the Ecumenical Council of Nicaea and stack for the formulation “One deity, three persons”.

Accepting the Ecumenical Council, the Armenian Apostolic Church commemorates the memory of 150 Patriarchs participating in the Council.

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Սովորաբար Բարեկենդան է կոչվում շաբաթապահքերի և Մեծ պահքի նախընթաց օրը: Բարեկենդանին թույլատրվում են չափավոր վայելքներ, խրախճանքներ, խաղեր եւ ուտեստներ՝ ի հետևություն Եղիային ուղղված հրեշտակի խոսքի. «Ելիր, կեր, որովհետև երկար ճանապարհ ես գնալու» (Թագ. 19:7): Բարեկենդան բառացի նշանակում է կենդանություն, բարի կյանք:

Մեծ պահքի բարեկենդանը կոչվում է Բուն Բարեկենդան, քանի որ նախորդում է ամենաերկար պահքին: Բարեկենդանը մարդու երջանկության հիշատակն է, որը դրախտում վայելում էին Ադամն ու Եվան: Այն նաև դրախտային կյանքի օրինակն է, որտեղ մարդուն արտոնված էր ճաշակել բոլոր պտուղները, բացառությամբ բարու և չարի գիտության ծառի պտղից, որը պահքի խորհրդանիշն է: Բարեկենդանն առաքինությունների արտահայտություն է: Այդ օրը մարդիկ սգից անցնում են ուրախության, չարչարանքից՝ խաղաղության: Այս ընկալմամբ է, որ յուրաքանչյուր քրիստոնյա հոգու խոնարհումով, ապաշխարությամբ, պահքով և ողորմության հույսով սկսում է Մեծ պահքի ճանապարհը: Այն տևում է 48 օր՝ Բուն Բարեկենդանից մինչև Ս. Հարության՝ Զատիկի տոնը:

Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք: Պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլև մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյանքից և այլ մեղքերից: Կերակրից հրաժարվելն առանց մեղքից հետ կանգնելու անօգուտ է: «Լեռան քարոզում» Քրիստոս պահքի մասին ասում է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում, ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը, այսինքն՝ մարդկանց երևալը և նրանցից գովվելը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի քո գլուխը և լվա քո երեսը, որպեսզի չերևաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը՝ գաղտնաբար, և քո հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ» (Մատթ. 6:16-18):

Մեր Տերը սովորեցնում է, թե ինչ ոգով է պետք այն կատարել: Ինչպես հիվանդությունն է ազդում մարմնի վրա, այնպես էլ մեղքն է ազդում հոգու վրա: Պահեցողությունը չէ, որ մեղքը քավվում է, այլ Աստված է քավիչը: Սակայն պահեցողությունը կարևոր է քավչարար այս սրբագործության մեջ: Զղջումը, աղոթքը, ապաշխարանքը հիմնական պայմաններն են Աստծո բուժիչ և քավիչ զորությունն ստանալու: Մեծ Պահքի 40 օրը խորհրդանշում է անապատում Քրիստոսի քառասնօրյա աղոթքի, ծոմապահության և ապաշխարության շրջանը: Իր մկրտությունից հետո Հիսուս «հոգով անապատ առաջնորդվեց ու քառասուն օր փորձվեց սատանայից: Չկերավ ու չխմեց այն օրերին» (Ղուկ. 4:1-3):

Մեծ Պահքն ունի յոթ կիրակի՝ Բուն բարեկենդան, Արտաքսում, Անառակի, Տնտեսի, Դատավորի, Գալստյան և Ծաղկազարդ: Ժողովրդական սովորության համաձայն՝ Մեծ Պահքի կիսվելու՝ Միջինքի օրը, բաղարջից պահոց գաթա են պատրաստում, որի մեջ մետաղադրամ են դնում: Սովորության համաձայն՝ բաժին հասնող մետաղադրամը հաջողություն է բերում: Մեծ Պահքի շրջանում արգելված է պսակադրությունները և մատաղը: Սակայն Վազգեն Ա կաթողիկոսի շրջաբերականով թույլատրվեց պսակադրություն կատարել Մեծ Պահքի օրերին, բացառությամբ Ավագ շաբաթվա:

Հայ եկեղեցում տարվա ընթացքում պահոց 158 օրերի մեծ մասը կարճատև պահքեր են՝ օրապահքեր (չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի մատնության և չարչարանքների) և շաբաթապահքեր, իսկ առավել ժողովրդականություն վայելողը և

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Պահքը չի սահմանափակվում միայն կենդանական սննդից հրաժարումով. այն առաջին հերթին հոգեկան ու բարոյական ամեն տեսակի ախտերից ու մոլություններից, մեղանչական մտքերից, խոսքերից ու գործերից մաքրվելն է, զղջմամբ ու ապաշխարությամբ աստվածահաճո և առաքինի կյանքին դառնալը: Պահոց շրջանում կարևոր է հոգևոր շնորհների ու հատկապես եղբայրասիրության մեջ զորանալը, քանի որ, ինչպես Եզնիկ Կողբացին է ասում. «Մեկը կարող է կենդանու միս չուտել, բայց անընդհատ իր եղբոր միսը ծամել»: Այս պարագային կարևոր է նաև մեկ այլ ծայրահեղությունից զգուշանալը. պահք պահելը չպետք է պատճառ դառնա պահեցողության մեջ տկարացող եղբայրակցին դատելու.«Ով ուտում է, թող չարհամարհի նրան, ով չի ուտում, իսկ ով չի ուտում, թող չդատի նրան, ով ուտում է» (Հռոմ.14:3):

Պահքը կամ ծոմապահությունը ներանձնական վիճակ է, և այն պետք չէ կատարել ի ցույց մարդկանց, այլ՝ ի փառս Աստծո: Պահքի նպատակն է մեր մարմինը վարժեցնել սակավապետության, որպեսզի հարստացնենք մեր հոգևոր կյանքը: Եթե մեկն ինքնանպատակ է պահք պահում, այսինքն՝ փառասիրության, կեղծավորության կամ էլ նիհարելու համար, ապա այն Աստծուն ընդունելի չէ, որովհետև ապաշխարության նպատակով չէ:

«Երբ ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծաւորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում. ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը: Այլ երբ դու ծոմ պահես, օծիր քո գլուխը և լուա քո երեսը, որպեսզի չերևաս մարդկանց որպես ծոմ պահող, այլ քո Հորը՝ գաղտնաբար. և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ»: (Մատթ 6:16 - 18)

Վարդապետներն ասում են, որ այն պարագային է մարմնի պահքը գեղեցիկ, երբ հոգին իրեն զերծ է պահում մեղքերից: Եվ ի՞նչ օգուտ մարմինը պահքով նվազեցնելուց, եթե հոգին գիրացնում ենք մահացու մեղքերով: Պահքը հոգին սնուցելու միջոց է. շարականներ, ավետարանական ընթերցումներ, աղոթքներ, ահա այն ամենը, որոնցով պիտի սնվի հավատացյալ մարդու հոգին պահքի ընթացքում:

«Արդ, ձեր ծոմապահության օրերին ձեր ցանկություններն եք կատարում և կսկիծ պատճառում բոլոր նրանց, ովքեր ենթակա են ձեզ: Հակառակության և կռիվների մեջ եք պահում և բռնցքահարում տկարին: Իսկ իմ ինչի՞ն է պետք այդպիսի ծոմապահության օրը. դուք պիտի զաք բողոքեք ինձ, և ես չպիտի լսեմ ձեզ: Այդպիսի ծոմապահությունը չէ, որ ես ընտրեցի, և ոչ էլ այնպիսի օրը, երբ մարդ իր անձն է տանջում: Եթէ պարանոցդ կորացնես օղակի նման ու տակդ քուրձ ու մոխիր տարածես, այդ էլ, սակայն, չեմ համարի ծոմ և ընդունելի օր. այդպիսի ծոմապահությունը չէ, որ ես ընտրեցի, - ասում է Տերը: - Քանդիր անիրավության հանգույցը, խորտակիր քո վաճառականական խարդախությունն ու բռնությունը, ներիր ու արձակիր նեղյալներին և պատռիր բոլոր անիրավ մուրհակները»: (Եսայի 58:3 – 6)

Պահքը անպայման պետք է զուգորդվի աղոթքներով, որով կառաջնորդվենք դեպի ավետարանական ճշմարտություններ, դեպի հավատք, դեպի Աստված: Մեծ պահքն ընդգրկում է վեց կիրակի: Այդ կիրակիները կապված են աստվածաշնչյան վեց պատմությունների հետ, որոնք կազմել են Հակոբոս Տյառնեղբայրը և Կյուրեղ Երուսաղեմացին: Այդ կիրակիներն են՝Բուն բարեկենդան, Արտաքսման, Անառակի, Տնտեսի, Դատավորի և Գալստյան: Այս անվանումներն ինքնըստինքյան ցույց են տալիս յուրաքանչյուր կիրակիի խորհուրդը, և բոլորը միսնաբար կազմում են «ոսկե շղթա», որոնցով ծանոթանում ենք մարդու անցած ճանապարհին՝ աշխարհի արարչագործությունից մինչև Քրիստոսի Երկրորդ գալուստը:

EVE OF GREAT LENT OR GREAT BAREKENDAN

The Armenian Church has defined the period of Great Lent as a time of abstinence and repentance for the faithful. Each Sunday during this period is named after an event in the Holy Bible that contains the message of the day. According to the calendar, the days prior to weekly fasts, as well as Great Lent, (with the exception of the fast preceding Holy Nativity) are called Barekendan. The word Barekendan means “good living” or “good life”, as we are called to live cheerfully, joyfully, and to be happy on these days preceding fasting periods.

On these days of Barekendan, the angel’s words addressed to the prophet Elijah are fulfilled: “Arise and eat, otherwise the journey will be too great for you” (1 Kings 19:7). The Armenian Church thus allows her faithful to organize games, festivals, carnivals and large, plentiful meals to observe the feast, as it is followed by a period of fasting and abstinence.

The Eve of Great Lent, as Great Barekendan is also called, commemorates the human bliss, which Adam and Eve enjoyed in the Garden of Eden. It also symbolizes the heavenly right, according to which, mankind could eat all types of fruit, except the fruit of the Tree of Knowledge of Good and Evil. Barekendan is the manifestation of the virtues of the soul, through which people can transform mourning to joy, and torment to peace. It is with this comprehension, with bowing of our souls, penitence, fasting and hope for mercy, that each Christian individual should take his first step on the long, 40 day journey of Great Lent, culminating with the Glorious Resurrection of our Lord Jesus Christ.

The period starting from the day following the Great Barekendan and lasting till the Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ, is called Great Lent. In the period of the Great Lent, people, refraining from bodily pleasures and sins, get prepared for the Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ by means of abstinence and repentance. Both spiritual and moral and bodily abstinence are considered to be important.Our church fathers have called the period of the Great Lend as "Karasnordats", as the period of fasting lasts 40 days. This period of the Great Lent is also called "Salt and bread", as in the past during the period of the Great Lent people have eaten only salt and bread.

In the New and old Testaments there are many testimonies concerning the period of Great Lent. Moses fasted for forty days and only then received the Lord's rules and canons. However, this period is related to 40-day period of temptation of Christ in the desert, following which our Church fathers established this period of fasting.

Fasting may be of three kinds: usual fasting, rigorous abstinence and absolute fasting. In case of usual fasting people can eat only food of vegetable origin. In case of rigorous fasting people refuse to eat any food even of vegetable origin. And in case of absolute fasting people refuse to eat any kind of food, including even bread and water.

During the period of the Great Lent curtains in the churches are closed in commemoration of the fact that after sinning Adam was exiled from Eden and the doors were closed before him.

DAILY BIBLE READINGS FOR 2023 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

20 February	**First day of Lent**
	Isaiah 1:16-20
21 February	**Ezekiel 18:20-23**
22 February	**Exodus 1:1-2:10; Joel 1:14-20**
23 February	**Romans 6:3-14**
24 February	**Deuteronomy 6:4-7:10; Job 6:13-7:13; Isaiah 40:1-8**
25 February	**St. Theodore the Warrior**
	Wisdom 8:19-9:5; Isaiah 62:6-9; Romans 8:28-39; Matthew 10:16-22

ՄԵԾ ՊԱՀՔ

Մեծ Պահքի շրջանը տևում է 48 օր՝ Բուն Բարեկենդանից մինչև Ս. Հարության (Զատկի) տոնի նախօրեն:

Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք:

Պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլև մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյանքից և այլ մեղքերից: Կերակրից հրաժարվելն առանց մեղքից հետ կանգնելու՝ անօգուտ է: «Սատանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում և չի հոգնում», - ասում է Ս. Գրիգոր Տաթևացին: «Լեռան քարոզում» Քրիստոս պահքի մասին ասում է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում, ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը, այսինքն՝ մարդկանց երևալը և նրանցից գովվելը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի քո գլուխը և լվա քո երեսը, որպեսզի չերևաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը, գաղտնաբար, և քո հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ» (Մատթ. 6:16-18): Մեր Տերը սովորեցնում է, թե ինչ ոգով է պետք այն կատարել: Ինչպես հիվանդությունն է ազդում մարմնի վրա, այնպես էլ մեղքն է ազդում հոգու վրա: Պահեցողությունը չէ, որ մեղքը քավում է: Աստված է քավիչը: Սակայն պահեցողությունը կարևոր է քավչարար այս սրբագործության մեջ: Աղջումը, աղոթքը, ապաշխարանքը հիմնական պայմաններն են Աստծո բուժիչ և քավիչ զորությունն ստանալու:

Պահքի 40 օրը խորհրդանշում է անապատում Քրիստոսի քառասնօրյա աղոթքի, ծոմապահության և ապաշխարության շրջանը: Իր մկրտությունից հետո Հիսուս «հոգով անապատ առաջնորդվեց ու քառասուն օր փորձվեց սատանայից: Չկերավ ու չխմեց այն օրերին» (Ղուկ. 4:1-3): Հիսուս Իրեն ծոմապահության ենթարկեց մարդկային ցեղի փրկության համար, մարդկության փոխարեն Ինքն ապաշխարեց, որպեսզի բոլոր պահեցողություն անողների ապաշխարանքն իմաստ և իրականություն ստանան շնորհիվ Իր ծոմապահության: Քառասնօրյա պահքին հաջորդում է պահոց ևս մեկշաբաթյա շրջան՝ Ավագ շաբաթը: Այդ է պատճառը, որ քառասնօրյա կոչվող պահքը 48 օր է տևում: Մեծ Պահքն ունի յոթ կիրակի, յոթ հիշարժան օրեր. Բուն բարեկենդան, Արտաքսում, Անառակի, Տնտեսի, Դատավորի, Գալստյան և Ծաղկազարդ:

Մեծ Պահքը կիսվում է միջինքով: Պահքն այդ օրը չեն ընդհատում: Պարզապես ժողովրդական սովորության համաձայն՝ այդ օրը բաղարջից պահոց գաթա են պատրաստում:

Մեծ Պահքի շրջանում վաղնջական կանոններով արգելված են եղել պսակադրությունները և մատաղը: Սակայն Վազգեն Ա կաթողիկոսի շրջաբերականով խիստ անհրաժեշտության դեպքում թույլատրվեց պսակադրություն կատարել Մեծ Պահքի շաբաթ և կիրակի օրերին, բացառապես Ավագ շաբաթվա բոլոր օրերի:

Եկեղեցական տոնացույցի համաձայն տարին բաժանվում է տոնական և պահոց օրերի: Պահոց 158 օրերի մեծ մասը կարճատև պահքեր են՝ օրապահքեր (չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի մատնության և չարչարանքների) և շաբաթապահքեր, իսկ առավել ժողովրդականություն վայելող և ամենաերկարատև պահքը Մեծ կամ Քառասնորդական պահքն է: Ի՞նչ է պահքը: Առաջին իմաստով այն կամավոր ինքնազրկումն ու զսպվածությունն է սննդի նկատմամբ: Եկեղեցական ավանդության համաձայն՝ երեք տեսակի պահքեր գոյություն ունեն: Առաջինը սովորական պահքն է՝ կենդանական ծագում ունեցող սննդից (բացառությամբ մեղրի) և ոգելից խմիչքներից հրաժարումը: Երկրորդը սրբապահքն է՝ հրաժարումը նաև բուսական ծագման՝ ընդհուպ մինչև սոսկ աղուհացով սնվելը (Մեծ պահքի շրջանը կոչվում է նաև Աղուհացի շրջան): Երրորդը ծոմն է՝ միաժամանակ ընդհանրապես հրաժարումը սննդից և անգամ ջրից:

Իհարկե, կարելի է նկատի առնել պահքի օգտակարությունը նաև բժշկական տեսակետից, հատկապես Մեծի պահոց շրջանում, քանի որ գարնանամուտն առանց ճարպային, կենդանական սննդի անցկացնելը դրական ազդեցություն է ունենում օրգանիզմի վրա: Սակայն սխալ է այն մտայնությունը, թե պահքը սոսկ դիետա է՝ նիհարելու կամ որոշակի հիվանդություններից ձերբազատվելու համար: Պահքը չի սահմանափակվում միայն կենդանական սննդից հրաժարումով. այն առաջին հերթին հոգեկան ու բարոյական ամեն տեսակի ախտերից ու մոլություններից, մեղանչական մտքերից, խոսքերից ու գործերից մաքրվելն է, զղջմամբ ու ապաշխարությամբ աստվածահաճո և առաքինի կյանքին դառնալը: Պահոց շրջանում կարևոր է հոգևոր շնորհների ու հատկապես եղբայրասիրության մեջ զորանալը, քանի որ, ինչպես Եզնիկ Կողբացին է ասում.«Մեկը կարող է կենդանու միս չուտել, բայց անընդհատ իր եղբոր միսը ծամել»: Այս պարագային կարևոր է նաև մեկ այլ ծայրահեղությունից զգուշանալը. պահք պահելը չպետք է պատճառ դառնա պահեցողության մեջ տկարացող մեր եղբայրակցին դատելու. «Ով ուտում է, թող չարհամարհի նրան, ով չի ուտում, իսկ ով չի ուտում, թող չդատի նրան, ով ուտում է» (Հռոմ.14:3):

Պահքի կարևորությունը առավել հարազատորեն ըմբռնելու համար պիտի ընդգծենք այն հանգամանքը, որ այն օրինադրվել է դեռևս դրախտում, և Աստծու կողմից մարդուն տրված առաջին պատվիրանը եղել է հենց պահք պահելը. «Դրախտում ամէն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու եւ չարի գիտութեան ծառից մի կերեք, որովհետեւ այն օրը, երբ ուտէք դրանից, մահկահացու կդառնաք» (Ծննդ.2:16-17):

Ի տարբերություն այլ եկեղեցիների, որոնք պարզապես թվակարգում են Մեծ պահքի 7 կիրակիները, Հայաստանյայց եկեղեցին սուրբգրային հիմք ունեցող յուրահատուկ անուններով ու խորհուրդներով է օժտել այդ կիրակիները: Դրանով նրանք կազմել են խորհրդանշական մի շղթա՝ արտացոլելով մարդու դրախտային կյանքի, պատվիրանազանցության ու անկման, աստվածորոնողության և աստվածային նախախնամությամբ փրկագործության ողջ ընթացքը:

Պահքերի (բացառությամբ օրապահքերի) նախորդ օրերը կոչվում են «բարեկենդան», իսկ Մեծ Պահքին նախորդում է Բուն Բարեկենդանը: Բարի կենդանություն, այսինքն՝ բարի, անհոգ և երջանիկ կյանք. այս իմաստն է ամփոփված «բարեկենդան» անվան մեջ, որ առավելագույնս արտահայտված ենք տեսնում Բուն Բարեկենդանի խորհրդում, որը Մեծ Պահքի առաջին կիրակին է և պատկերում է մարդու դրախտային երանավետ կյանքը: Այս խորհուրդը երևում է անգամ սննդի օգտագործման մեջ, քանի որ Բուն Բարեկենդանը կենդանական և ճոխ ուտելիք գործածելու վերջին օրն է: Մեծ պահքի երկրորդ կիրակին կոչվում է Արտաքսման և խորհրդանշում է մարդու՝ դրախտից արտաքսվելը և Աստծո տեսությունից զրկվելը: Հենց սա է խորհրդանշում ողջ Մեծ Պահքի շրջանում եկեղեցիների վարագույրների փակ մնալը և Ս. Հաղորդությունից հավատացյալների անմասն մնալը: Երրորդ կիրակին կոչվում է Անառակի և մատնանշում է առ Աստված դառնալու և կորուսյալ դրախտը գտնելու կարեվորագույն նախապայմանը՝ ապաշխարանքը: Չորրորդ՝ Տնտեսի կիրակին, ուսուցանում է նյութական հարստության տնօրինման կերպի դերը հավիտենական փրկության կամ կորստյան մեջ: Հինգերորդ՝ Դատավորի կիրակին, պատգամում է հարատև աղոթքի անփոխարինելի նշանակությունը փրկության համար: Վերջին՝ Գալստյան կիրակին, ամփոփում է Քրիստոսի ինչպես Ա Գալստյան խորհուրդը, այնպես էլ Երկրորդ գալստյան խոստումը:

Մեծ Պահքին անմիջապես հաջորդող շաբաթը կոչվում է Ավագ Շաբաթ և ընդգրկում է Փրկչի երկրային կյանքի վերջին կարևորագույն իրողությունները՝ հաղթական մուտքը Երուսաղեմ (Ծաղկազարդ), Վերջին Ընթրիքը, Մատնությունը, Չարչարանքները, Խաչելությունը, Մահը, Թաղումը և ի վերջո հրաշափառ Հարությունը՝ Ս. Զատիկը:

ABOUT THE GREAT LENT

This year the period of Great Lent starts on February 16. It lasts 48 days beginning on the Eve of Great and lasts till the Eve of the Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ (Easter). This year the Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ is celebrated on April 5.

During the fasting period people eat exceptionally food of vegetable origin. During the fasting period people not only refuse of certain kinds of food, but also of ill habits – talkativeness, lying, swearing and other sins.

Refusing from food without avoiding of sins is useless. “Satan always fasts, it does not eat anything and however, it does not and is not tired of sinning,” says St Gregory of Tatev. During the Sermon on the Mount Jesus says the following about fasting: “Moreover when you fast, be not, as the hypocrites, of a sad countenance: for they disfigure their faces, that they may appear unto men to fast. Verily I say unto you, they have their reward. But you, when you fast, anoint your head, and wash your face; that you appear not unto men to fast, but unto your Father which is in secret: and your Father, which sees in secret, shall reward you openly.” (Mt 6:16-18). Our Lord Jesus Christ teaches us the way of fasting. As disease makes influence on the body in the same way sin makes influence on the soul. It is not fasting that atones the sin. It is God that gives absolution to sins. However, fasting is important in giving absolution to sins. Repentance, prayer and confession are the main conditions for receiving absolution of sins.

Forty days of fasting period symbolize Christ’s 40-day lasting period of abstinence and repentance in the desert. After His baptism Jesus “was led by the Spirit into the wilderness, being forty days tempted of the devil and in those days he did eat nothing” (Lk 4:1-3). Jesus subjected Himself to abstinence for the salvation of mankind, He repented instead of mankind so that penitence of all those who fast should gain sense and be realized by means of His abstinence. Another period of fasting lasting for a week follows the 40-day fasting period. It is the Holy Week. That is why the forty-day called fasting period lasts 48 days.

The period of Great Lent consists of seven remarkable Sundays: Eve of Great Lent, Sunday of Expulsion, Sunday of the Lost (Prodigal) Son, Sunday of the Steward, Sunday of the Judge, Sunday of Advent and Palm Sunday.

The 24th day or the fourth Wednesday of the period of Great Lent is called Mijink symbolizing that first half of the period of Great Lent has already passed. This year Mijink is on March 11. That day fasting is not stopped. According to folk tradition the housewives bake unleavened cake and put a coin in it while baking. The current year will be successful for the member of the family who will have the coin in his/her portion.

According to ancient traditions marriage and offering sacrifice were forbidden during the period of Great Lent. However, by the pontifical encyclical of Vazken A Catholicos of all Armenians it was permitted in case of extreme necessity to perform the sacrament of marriage during the period of Great Lent and on Sundays except all days of the Holy Week.

Announcement

Organist / Keyboard Player Required

St Yeghiche Armenian Church Parish is looking to engage an enthusiastic Organist / Keyboard player to assist and enhance our Sunday Divine Liturgy and its glorification of our Lord.

The position entails playing on Sunday's Divine Liturgy, and other religious events throughout the Year.

Fees by negotiation – Immediate start

If interested please contact
Choirmaster Mr Aris Nadirian or
Parish Council Chairman Mr Viken Haladjian
by calling 020 73738133 or by emailing to
info@styeghiche.org.uk

The Church organ is the second largest in the country, lavishly carved and decorated with prefigures of Gothic architecture. It is noteworthy that Sir Arthur Seymour Sullivan, illustrious English composer was the first organist at St Yeghiche Armenian Church (previously known as St. Peter's Church) who played the first version of the existing organ from 1867 to 1871. .

Saint Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Great Lent Friday evening prayers

Երկուշաբթի 20 Փետրուար 2023ին մեր առջեւ կը բացուի Մեծ Պահոց հոգեւոր ժամանակաշրջանը:
Monday 20th February is the start of Great Lent Period.

Արդարեւ կ՚ուզանք յայտնելու՝ թէ Մեծ Պահոց Հնկումի ժամերգութիւնները պիտի կատարուին փոխնիփոխ Ս. Սարգիս եւ Ս. Եղիշէ Եկեղեցիներէն ներս:
We would like to inform you that the lent period Friday prayer service ,reflection and silent meditation will be carried our in both St Sarkis and St Yeghiche Churches.

Հնկումի ժամերգութիւնները պիտի կատարուին ամեն Ուրբաթ երեկոյան ժամը 18:30ին սկսեալ,
The Reflection Prayers timetable for every Friday at 18:30 is as follows:

24 Փետրուար (February) Ս Եղիշէ @ St Yeghiche
3 Մարտ (March) Ս, Սարգիս @ St Sarkis
10 Մարտ (March) Ս, Եղիշէ @ St Yeghiche
17 Մարտ (March) Ս, Սարգիս @ St Sarkis
24 Մարտ (March) Ս, Եղիշէ @ St Yeghiche
31 Մարտ (March) Ս, Սարգիս @ St Sarkis

Ս. եւ Անմահ Պատարագ՝ ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11:00ին

Divine Liturgy every Sunday at 11:00 am

Ս. Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխական Խորհուրդ. St Yeghiche Armenian Church Parish Council.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Մեծ Պահքից առաջ...

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Արդարեւ, մեզնից ոչ ոք իր համար չի ապրում եւ իր համար չի մեռնում. եթէ ապրում ենք,

Տիրոջ համար ենք ապրում. եւ եթէ մեռնում ենք, Տիրոջ համար ենք մեռնում: Եւ արդ, ապրենք թէ մեռնենք, Տիրոջն ենք» (Հռոմ. 14. 7-8):

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս,

Ամէն տարի Մեծ Պահքի նախորդ շաբաթը նշանաւորւում է ազգային եւ եկեղեցական այնպիսի տօներով, որոնք կարծես գալիս են հոգեւոր պատերազմից առաջ պատրաստելու, հոգեւորաբար սպառազինելու մեզ պահոց եօթ շաբաթներին անցնելիք պատասխանատու շրջանի համար: Սրբոց Ղեւոնդեանց եւ Վարդանանց տօները մեզ ոգեւորող օրինակներ են տալիս ե՛ւ մարմնաւոր, ե՛ւ հոգեւոր պատերազմների մէջ առաւել պատրաստուած լինելու, որպէսզի յաղթանակած դուրս գանք հոգեւոր փոքր ու մեծ ճակատամարտերից:

Սուրբ Գիրքը յաճախ է պատերազմի բառապաշար գործածում հոգեւոր պայքարը նկարագրելիս: Շատերին շփոթեցնում է, երբ կարդում են մանաւանդ Սաղմոսաց գրքից այնպիսի հատուածներ, որոնք վերաբերում են թշնամիների ոչնչացմանը՝ գլուխը քարին զարնելուց, մինչեւ ատամների փշրում եւ սերնդի ոչնչացում: Բայց բոլորը չէ, որ անդրադառնում են այդ մասերի հոգեւոր խորութեան, որ յատկապէս այսօրուայ մարդու համար դաժան թուացող այդ պատկերները վերաբերում են հոգեւոր պատերազմին՝ իբրեւ թշնամի դիտելով սատանային եւ իր դեւերին: Պօղոս առաքեալի խօսքերն ամբողջութեամբ ցրում են կասկածի վերջին ամպերը, երբ կարդում ենք Եփեսոսի քրիստոնեաներին

ուղղուած նամակից այս տողերը. **«..որովհետեւ մեր պատերազմը մարմնի եւ արեան դէմ չէ, այլ՝ իշխանութիւնների դէմ, պետութիւնների դէմ, այս խաւար աշխարհի տիրակալների դէմ եւ երկնքի տակ եղող չար ոգիների դէմ»** (Եփ. 6:12): Այս մտայնութեան մէջ առաւել յստակ է հասկանալի դառնում այն նիւթական զոհողութիւնը, որ ցանկացած քրիստոնեայ կատարում է յանուն հոգեւոր շահի՝ լինի անհատապէս թէ համազգային:

Սուրբ Ղեւոնդեանց պարագայում գործ ունենք գաղափարն իրենց անձնական օրինակով ժողովրդին մատուցելու, աստուածսիրութեան եւ հայրենասիրութեան կայծից համազգային դիմադրութեան հրդեհ բռնկելու հետ: Սուրբ Վարդանանց օրինակն այլեւս դասագրքային է դարձել, քանի որ միս ու արիւն տուեցին աստուածսիրութիւնը հայրենասիրութեան միջոցով ապրեցնելու գաղափարին:

Սա լաւագոյն օրինակն է՝ ցոյց տալու, որ Եկեղեցին Քրիստոսին բոլոր հաւատացողների միութիւնն է, որ սուրբ Վարդանանց օրերին առաւել շեշտուեց իբրեւ Եկեղեցու Ուխտի Միաբանութիւն: Այս Ուխտի մէջ էին բոլորը՝ կաթողիկոսից մինչեւ սարկաւագ, մարզպանից եւ սպարապետից մինչեւ պարզ զինուոր եւ հողագործ: Նիւթը տալ հոգեւորի դիմաց, ինքնազոհ եւ գիտակից մահ, որ իրենցից յետոյ եկող սերունդների համար հոգեւոր անմահութեան սերմ եղաւ. **«Բայց ասում եմ ձեզ՝ իմ սիրելիներին. մի՛ զարհուրէք նրանցից, որ մարմինն են սպանում եւ դրանից յետոյ աւելի բան չեն կարող անել»** (Ղուկ. 12:4): Ընդհանրական եկեղեցու սուրբ հայրերից Մակար Մեծն ասում է. «**Հաւատա՛, որ եթէ դու ճանաչես Նրան, որ միշտ քեզ հետ է, երբեք ոչնչից չես վախենայ այս աշխարհում** »: Ամէն մարդ եւ ամէն սերունդ այս
ճանապարհը իւրովի է անցնում: Մեզանից առաջ ապրած բոլոր սերունդները մեզ խրատ են կարդում՝ միշտ խմելու այն սիրոյ աղբիւրից, որ Ինքը Քրիստոս է:

Հոգեւոր պայքարում յաղթելու համար պարտադիր է կապը Քրիստոսի եւ Իր սուրբ Եկեղեցու հետ, միանալու Եկեղեցու Ուխտի միաբանութեանը՝ թիկունքին ունենալով նաեւ յաղթած սուրբերի բարեխօսութիւնը. **«զօրացէ՛ք Տիրոջով եւ նրա զօրութեան կարողութեամբ. եւ Աստծու սպառազինութիւնը հագէ՛ք, որպէսզի կարողանաք ընդդիմանալ սատանայի հնարանքներին»** (Եփ. 6:13):

Մեծ Պահքի շրջանը հոգեւոր պայքարի եւ հոգեւոր յաղթանակի շրջան է, երբ պէտք է կարողանանք մեր զգայարանները պահել մեղքից, զինուել հոգեւոր առաքինութիւններով եւ զօրանալ Քրիստոսով: Մկրտութիւնից յետոյ Դրոշմի խորհուրդի ընթացքին մեր ստացած խաչանիշ կնիքները հոգեւոր զէնքեր են՝ պաշտպանուելու եւ հարձակուելու հէնց հոգեւոր

այսպիսի պատերազմում, մարելու չարի արձակած բոլոր ծխացող նետերը: Աձնական անտեսանելի պայքարից մինչեւ համազգային դիմադրութիւն յաղթանակի սկզբունքը նոյնն է՝ նախ մեր ներսի թշնամուն յաղթել, նախ նիւթին պարտութեան մատնել: Այսպէս արեց Քրիստոս անապատում՝ յաղթելով սատանային, մերժելով նրա առաջարկները, հայեացքը մարմնի կարիքներից առաւել հոգու վրայ բեւեռելով, պատրաստ լինելով մարմնի խաչումին՝ յարութեա: Սուրբեր են այն բոլոր քրիստոնեաները, որ հետեւում են Քրիստոսին, ձգտում են հպարտացած Ադամի փոխարէն մեզ համար խոնարհ դարձած Քրիստոսին նմանուել: Որքան յաճախ ենք լսում Քրիստոսի խօսքերը. **«Ով սիրում է իր անձը, կը կորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կը պահի յաւիտենական կեանքի համար»**(Յովհ. 12:25):

Քառասնորդական Մեծ Պահքը հոգու Եգիպտոսից Աւետեաց երկիր գալու շրջան է, Եղիայի պէս զրկանքով անապատ քայլելու եւ աստուածտեսութեան արժանանալու ուխտագնացութիւն է, Քրիստոսի հետ անապատի փորձութեան միջով անցնելու եւ սատանային ոտնակոխ անելու միջոց է, մեղքերի մահացութիւնից յառնելու եւ դրախտ վերադառնալու յաղթահանդէս է: Դրա համար առաջին կիրակին դրախտային ուրախութեան, Աստծոյ ներկայութեան, Սուրբ Հոգու շնորհներով զարդարուած լինելու յիշողութեամբ զօրանալն է, որ յետագայ բոլոր օրերին մեր աչքերի առջեւ ունենանք այն նաւահանգիստը, ուր պիտի հասնենք Աստծո խնամքով ու ողորմութեամբ:

«Քաղցածների՛ն բաժանիր քո հացը եւ անօթեւան աղքատների՛ն տար քո տունը. եթէ մերկ մարդ տեսնես՝ հագցրո՛ւ նրան, բայց քո ընտանիքի զաւակին մի՛ անտեսիր: Այն ժամանակ այգաբացի պէս պիտի ծաւալուի քո լոյսը, եւ արագօրէն պիտի հասնի քո ապաքինումը, քո առջեւից պիտի ընթանայ քո արդարութիւնը, Աստծու փառքը պիտի պահպանի քեզ: Այն ժամանակ պիտի կանչես, եւ Աստուած պիտի լսի քեզ. մինչեւ դու խօսես, նա պիտի ասի, թէ՝ «Ահա հասել եմ» (Ես. 58:7-9):

Թող Բուն Բարեկենդանով Աստծոյ հետ լինելու դրախտային ուրախութիւնն ու ցնծութիւնը ոգեւորեն ամենքիս՝ միասին քայլելու ապաշխարութեան եւ վերադարձի այս շրջանը եւ միասին վայելելու Զատիկը՝ Քրիստոսի յարութեան լուսաւոր Աւետիսը:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

PRAYER SERVICES DURING THE GREAT LENT

Monday, 20th February, is the beginning of Great Lent, a period which lasts 40 days. The Armenian Church defines the period of Great Lent as a time of abstinence and repentance for the faithful. It is a profound and unique period of spiritual experience.

Liturgical celebrations on Sundays: There are services every Sunday starting at 11:00 am at St Yeghiche Armenian Church. The faithful are welcome.

Vigils on Friday evenings: There are vigils every Friday evening at St. Yeghiche Armenian Church (on 24th February, 10th March and 24th March) and St Sarkis Church (on 3rd, 17th and 31th March) starting at 6:30 pm. The faithful are welcome.

St Yeghiche Armenian Church Pocket Calendars 2023

We are pleased to inform that St Yeghiche Armenian Church pocket calendars for 2023 with all religious dates are out. These are on offer at the church entrance for a donation fee of £5.00. If you are a registered and dues paying members of the Parish, you should have received them with our compliments.

Announcement

Dear St Yeghiche Parish Registered Members,

We are pleased to inform you that our Annual Parish General Assembly meeting will take place on 5th March 2023 at St Yeghiche Armenian Church at 1:00pm.

As stated in our constitution all registered members are encouraged and should participate at this Annual Parish Assembly meeting provided they have paid their Parish Contribution for the year and up to 2022.

Your attendance is extremely important to evaluate and support your Parish and its council who have collectively volunteered to run the activities at the church and within your Parish.

We look forward seeing you **St Yeghiche Armenian Church Parish Council**

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Garabed, Hranoush Atanosian and Family (Harout' Ovsanna and Varag) for the soul of their Sister and Aunt the late **KEGHETZIG ATANOSIAN** (Գեղեցիկ Աթանոսեան) on the 1st anniversary memorial of her passing, also for their Parents the late **HAROOTYOUN** and **OVSANNA ATANOSIAN** (Յարութիւն եւ Օվսաննա Աթանոսեան), also for their relative the late **PAPKEN SIMONIAN** (Փափկեն Սիմօնեան) on the 1st anniversary memorial of his passing, also for **SIRVART** and **AREVART BADALIAN** (Սիրուարդ եւ Արեւարդ Բադալեան), also for all the old and new deceased members of all the old and new deceased members of **ATANOSIAN**, **SIMONIAN**, and **BADALIAN** Families.

By Alice and Aram Mardirosian, Armand, Aline, and Tamar Abramian for the soul of their Mother, who was also a loving Grandmother, the late **ZOVINAR AVEDIAN ABRAMIAN** (Ծովինար Աւետեան Աբրամեան) (1923-2022) on the 1st anniversary memorial of her passing, also for their Uncle who was also a loving Great-uncle the late **MOVSES AVEDIAN** (Մովսէս Աւետեան) on the 1st anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **AVEDIAN**, **MARDIROSIAN** and **ABRAMIAN** Families.

By Armand, Aline, and Tamar Abramian, and Tanya Garabedian for the soul of their Mother, who was also a loving Grandmother, the late **ANAHID GARABEDIAN** (Անահիտ Կարապետեան) also for all the old and new deceased members of the **GARABEDIAN** and **ABRAMIAN** Families.

By **The Armenian Relief Society of GB (Հայ Օգնութեան Միութիւն)**, in memory of their late Ungerouhiner:
KLARA KARABEDYAN (Քլարա Կարապետեան), **ANOUSH KHALOIAN** (Անուշ Խալոեան), **SUSIE SHEKERDEMIAN** (Սիւզի Շիրտմեան), **LIZA ARMAGHANIAN** (Լիզա Արմաղանեան), **MARIE KHALOIAN** (Մարի Խալոյեան), **SEDA TARLANIAN** (Սեդա Թառլանեան), **ANJEL RAHANIAN** (Անժէլ Ռահանեան), **YVETTE MANKASSARIAN** (Իվէթ Մանգասարեան), **ACHIK HOVHANESSIAN** (Աչիկ Յովհաննէսեան), **AREG DER BARSEGHIAN** (Արեգ Տէր Բարսեղեան), **ARPINEH LEVONIAN** (Արփինէ Լևոնեան), **NELLY HOVSEPIAN** (Նելլի Յովսէփեան), **HRIPSIK MARTINIAN** (Հռիփսիկ Մարթինեան), **HASMIK GASPARIAN** (Յասմիկ Գասպարեան), **SIROUN CROFT** (Սիրուն Քրոֆթ), **ALICE KARAPETIAN** (Ալիս Կարապետեան), **OVSANNA KHULIAN** (Ովսաննա Խուլեան), **RUBINA BOGHOSIAN** (Ռուպինա Պողոսեան), **FLOR AZOIAN** (Ֆլոր Ազոյեան), **MARIE CHOLAKIAN** (Մարի Չոլաքեան), **MAGGIE ASLANIAN** (Մագի Ասլանեան), **ANGEL DADOURIAN** (Անժել Տատուրեան), **ARSHAKOUHI NANAJANIAN** (Արշակուհի Նանաջանեան), **KNARIK HOVHANNESIAN** (Քնարիկ Յովհաննէսեան), **SIRAN HAGOPIAN** (Սիրան Յակոբեան), **NAZIK GRIGORIAN** (Նազիկ Գրիգորեան), **KATHY GHOURJIAN** (Քաթի Ղուրջեան), **NVART KHLOIAN** (Նուարթ Խլոյեան), **KNARIG YOUNG-VARTANIAN**(Քնարիկ Եանգ-Վարդանեան), **ANGEL BESHIRIAN** (Անժել Բէշիրեան), **SONIA CHABCHOVIAN** (Սօնեա Չապչովեան), **ROZIK BANIAN** (Ռոզիկ Բանեան), **SEDA ARZOOMANIAN** (Սեդա Արզումանեան), **LOUSIK ARZOOMANIAN** (Լուսիկ Արզումանեան).

Cont... on next page

4: Հոգեհանգիստ - Memorial Service

By Stella and Karnik Tarverdi for the soul of their relatives **ANOUSHIG** (Անուշիկ) and **VAGHARSHAK SIMONIAN** (Վաղարշակ Սիմոնեան), **ARPIK BOGHOSIAN** (Արփիկ Պօղոսեան), **NOUBAR** (Նուպար) and **MKERDICH TARVERDI** (Մկրտիչ Դարվերտի), and **HENRIK AJEMIAN** (Հենրիք Աճեմեան), also for all the old and new deceased members of the **SIMONIAN**, **BOGHOSIAN**, **AJEMIAN** and **TARVERDI** Families.

By Malas Family for the soul of their Sister who was also a loving Aunt the late **ARPINEH GIRAGOSIAN SARKISIAN** (Արփինէ Կիրակոսեան Սարգիսեան) on the 40th day memorial of her passing, also for all the old and new deceased members of **AVAKIAN**, **GIRAGOSIAN** and **MALAS** Families

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Hokehankist and in Liu of Flowers:
Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.
Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.**

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal
Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.